ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 4 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Վալերի Ենոքյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Վալերի Ենոքյանը 2018 թվականի մարտի 20-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226 հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ /2-3 մասեր/, 28-րդ, 29-րդ, 60-րդ /1-4 մասեր/, 61-րդ /1-ին մաս/, 78-81-րդ հոդվածներին, 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթով օրենսդիրը սահմանել է ժառանգության ընդունման եղանակները, սակայն նշյալ դրույթի մի մասով սահմանել է ժառանգության բացման վայրի նոտարին ժառանգի դիմումը հանձնելու միջոցով ժառանգության ընդունման հստակ ընթացակարգ, սակայն փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունման դեպքում օրենսդիրը չի սահմանել ժառանգության ընդունման հստակ եղանակներ և ընթացակարգ, ինչն էլ, ըստ դիմողի, հանգեցրել է դատարանների կողմից նշյալ դրույթի լայն և տարաբնույթ մեկնաբանությունների:

Ըստ դիմողի՝ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում չի բացահայտում փաստացի տիրապետման և կիրառման փաստով ժառանգության ընդունման հստակ և սպառիչ եղանակները, ինչի արդյունքում խախտվում են ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջները:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի սխալ մեկնաբանությունը նշյալ իրավանորմի անորոշության արդյունք է, որը Սահմանադրության պահանջներին հակասող մեկնաբանությամբ կիրառման արդյունքում հանգեցրել է վիճարկվող դրույթի կամայական կիրառությանը:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ առկա է 2016 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1321 որոշումը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-1321 որոշմամբ արձանագրել է, որ կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումը պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձի կողմից ինքնին բավարար հիմք է տվյալ անձի կողմից ժառանգության ընդունման փաստը դատական կարգով հաստատելու համար, և այդ փաստի հաստատման համար անհրաժեշտ չեն ժառանգությունն ընդունելուն միտված այլ ակտիվ գործողությունների կատարման և, մասնավորապես, նոտարին դիմում տալու վերաբերյալ ապացույցներ:

Հետևաբար, վիճարկվող դրույթի մասով դիմումի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Վալերի Ենոքյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

4 ապրիլի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-11